«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

դասընթաց **2023**

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ի՞նչպես իրականացնել նախագծային աշխատանք

կրտսեր դպրոցի սովորողների հետ

Հետազոտող ուսուցիչ՝ Աննա Անտոնյան

(Նոյեմբերյանի քաղաքի թիվ 2 հիմնական դպրոց)

Երևան **2023թ.**

Բովանդակություն

Ներածություն ……էջ 3-5

Գլուխ **1** «Նախագիծը որպես ուսուցման մեթոդ» ……էջ 6-9

Գլուխ **2** «Նախագծի տեսակները, իրականացման փուլերը,դրական կողմերը և հնարավոր դժվարությունները»……էջ10-16

Գլուխ **3** «Իմ փորձառությունը»……..էջ 17-21

Եզրակացություն ……...էջ 22-24

Գրականության ցանկ……էջ 25

Ներածություն

‹‹Մենք փորձառությունից չենք սովորում: Մենք սովորում ենք մեր փորձառության մասին դատողություններով անդրադարձ կատարելուց››:

Ջ. Դյուի

Թեև կրթական համակարգի բարեփոխումների պահանջներին համահունչ կրթության բնագավառում շատ փոփոխություններ են տեղի ունեցել, սակայն ժամանակակից դպրոցը սովորողներին դեռևս ծանրաբեռնում է մեծաքանակ տեղեկատվությամբ և այնքան էլ չի սովորեցնում ինքնուրույն առաջադրել պրոբլեմը, գտնել դրա լուծման հնարները, ճկունորեն արձագանքել նորամուծություններին, այսինքն՝ սեփական փորձի վրա հիմնվելով՝ ստացած գիտելիքները կիրառել գործնականում:

Կրթական համակարգի նորացման հիմնահարցը, անշուշտ, կարևոր և արդիական է և պահանջում է մասնագիտական խոր վերլուծություն: Ժամանակակից քաղաքացուն այսօր արդեն չի բավարարում միայն գիտելիքների իմացությունը, և կրթված մարդն այլևս նա չէ,ով ինչ-որ բան գիտի կամ իմացածը կարող է կիրառել իրականության մեջ մի նեղ ոլորտում ,այլ նա, ով ընդունակ է ինչ-որ բան իմանալու: Այսինքն՝ այսօր գնահատվում է ոչ այնքան ուսյալությունը , որքան ուսանելիությունը՝ մարդու սովորելու , ոչ ստանդարտ իրավիճակներից գլուխ հանելու, նրանցում արդյունավետ գործելու ունակությունը: Աշխատանքի շուկայի մրցունակությունը կախված է մարդու ակտիվությունից , մտքի ճկունությունից, գիտելիքների և փորձի կատարելագործման ունակությունից :Այս հիմնախնդրի լուծման համար շատ ուսուցիչներ նախընտրում են զանազան մանկավարժական տեխնոլոգիաներ ՝ ուղղորդվելով կրթության առավել ռացիոնալ ուղիներով:Մանկավարժական տեխնոլոգիայի խնդիրը ոչ միայն կոնկրետ առարկայից սովորողների գիտելիքների, հմտությունների,կարողությունների ձևավորումն է, այլև մարդու՝ որպես բարձրագույն արժեքի , հնարավորությունների բացահայտումն ու դպրոցից դուրս կողմնորոշվելու ունակ, ստեղծագործաբար օժտված անհատականության ձևավորումը: Կրթական տեխնոլոգիաներից մեկն է հանդիսանում նախագծային ուսուցումը: Նախագծումը (պլանավորում,ուրվագծում) բնորոշ է բոլոր մարդկանց, մարդը մշտապես նախագծում է իր մտքերը, գործողությունները ՝ անկախ նպատակից, ոլորտից և գործունեության տեսակից: «Նախագիծ» ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է «դեպի առաջ», ճանապարհ դեպի նպատակ: Նախագծային ուսուցման մեթոդը ուսումնաճանաչողական և համատեղ աշխատանքի կազմակերպման ձև է, որում ներգրավված են դասավանդողներն ու սովորողները: Նախագծային տեխնոլոգիայի հիմքում ընկած են սովորողի ճանաչողական, համագործակցային, հետազոտական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, փաստերը համադրելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը: Նախագծային տեխնոլոգիայի կիրառումը

հնարավորություն է տալիս ձեռք բերելու գիտելիքներ, ձևավորելու կարողություններ՝ կոնկրետ հանձնարարություններ ծրագրելու և ինքնուրույն իրականացնելու միջոցով: Ուսումնական նախագծերը նպաստավոր պայմաններ են ստեղծում սեփական հնարավորությունները ճանաչելու և զարգացնելու համար: Նախագծային մեթոդն ադապտիվ է. կարող է հարմարեցվել տարբեր միջավայրերի և նպատակների: Այն առավել արդյունավետ է, երբ դուրս է գալիս «դասարանային» և «դպրոցական» մակարդակից և գնում է դեպի համայնք: Ակնհայտ է ուսումնական մեթոդի և բաղաքացիական ակտիվության կապը. այն առավելապես երևում է այն նախագծերում, որոնց մասնակիցները փորձում են անդրադառնալ համայնքային հիմնախնդիրներին: Սովորողները տեղեկանում են, թե որտեղից են ծագում համայնքային տարատեսակ խնդիրները և պատասխանատվություն են ձեռք բերում իրենց համայնքի հանդեպ: Կոտրվում է շրջապատի հանդեպ անտարբերությունը, և տեղը գալիս է համայնքի հանդեպ սեփականության զգացումը: Ուսուցչի դերը նախագծային ուսուցման գործընթացում անչափ կարևոր է. սովորողներն իրենց ուսուցչին դերային մոդել (role model) են համարում: Փոփոխվող աշխարհի և ինֆորմացիոն մեծ հոսքի պայմաններում դա մեծ մարտահրավեր է ժամանակակից ուսուցչի համար, որից լուրջ պատրաստվածություն և աշխատանքի կարևորության գիտակցություն է պահաջվում: Այս դեպքում մանկավարժը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի և խորհրդատուի դեր:

Նախագծային ուսուցման տեխնոլոգիայի արդյունքը տեսանելի և հրապարակված աշխատանքն է:

Հետազոտության նպատակը

Ուսումնասիրել և վերլուծել չորրորդ դասարանի սովորողների իրականացրած նախագծային աշխատանքի արդյունավետությունը:

Հետազոտական հարց

Արդյո՞ք հնարավոր է չորրորդ դասարանի սովորողների մասնակցությամբ իրականացնել նախագծային աշխատանք՝ վեր հանելով համայնքային հիմնախնդիրները:

Հետազոտության խնդիրները

1.Ուսումնասիրել տարրական դպրոցում նախագծային գործունեության կազմակերպման առանձնահատկությունները:

2. Տարբերակել նախագծային աշխատանքի կատարման ընթացքում ուսուցչի և սովորողների գործողությունները:

3.Իրականացնել նախագծային աշխատանք սովորողների մասնակցությամբ:

4.Գնահատել նախագծահեն ուսումնառության առավելությունները և բացահայտել դժվարությունները:

Տարրական դպրոցում նախագծի իրականացումը անհնախադեպ էր իմ կողմից:Ես որպես դասվար,հաշվի առնելով իմ երեխաների կրեատիվությունը ,վառ երևակայությունը, ինքնատիպությունը և նախաձեռնողականությունը,հանձն առա նախագծի իրականացումը:Այն իր մեջ բավականին ռիսկեր էր պարունակում: Կրտսեր տարիքի երեխաներին մեկ նպատակի շուրջ համախմբելը այդքան էլ հեշտ չէր,մանավանդ,որ նրանք անհատականություններ էին իրենց տեսակով,խառնվածքով,ցանկություններով և դրսևորումներով::Սկզբում նրանց անհրաժեշտ էր ճիշտ դիտարկել տարբեր իրավիճակներում աշխատանքի բաժանման և դերերի բաշխման մեջ:Ճիշտ է ՝ որոշ չափով կարողանում էին անհատապես հանձնարարությունները կատարել,բայց խմբային աշխատանքի մեջ այնքան էլ լավ չէին դրսևորվում: Բացի այդ աշակերտները չունեին հետազոտություններ կատարելու և հավաքած տվյալները վերլուծելու հմտություններ:

Ժամանակի ընթացքում այդ խնդիրները հետզհետե հարթվեցին,սակայն դրանք իրենց հետ բերեցին նոր ավելի կարևոր խնդիր,այն է՝ արդյունքը ներկայացանելու և հրապարակայնացնելու(գովազդելու) խնդիրը:Իհարկե,չեմ մանրամասնում աշխատանքի իրականացման ճանապարհին առաջացած փոքր ու մեծ «քարիկներ»-ի մասին:Դրանք այնքան շատ էին,որ, նույնիսկ, հիմա բոլորը չեմ կարողանում հիշել:Կարևորը ամեն ինչ լավ ավարտվեց , արդյունքը շոշափելի էր:

Գլուխ 1

Նախագիծը որպես ուսուցման մեթոդ

Նախագծերի մեթոդի կիրառման փորձերը ցույց են տվել, որ միասին սովորելը ոչ միայն հեշտ է ու հետաքրքիր, այլ նաև ավելի արդյունավետ:

Եվգենիա Պոլատ

Նախագծային մեթոդը սկսել է կիրառվել անցյալ դարի 20-ական թվականներին,այն անվանում են նաև «խնդիրների մեթոդ» և կապված է ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուիի գաղափարների հետ: Նա գտնում էր, որ դպրոցը պետք է կազմակերպի սովորողների ակտիվ և նպատակամետ ուսումնական գործունեություն՝ հաշվի առնելով նրանց անհատական հետաքրքրությունները. երեխաները պետք է գիտակցեն, որ իրենց ձեռք բերած գիտելիքները պետք են գալու կյանքում, ինչն էլ ենթադրում է, որ լուծվելիք պրոբլեմները պետք է ընտրել իրական կյանքից, այնպիսիք, որոնք ծանոթ են երեխաներին և նշանակություն ունեն նրանց համար:Դյուին նաև պնդում էր,որ երեխայի կյանքը ապագա կյանքի նախապատրաստություն չէ,այլ լիարժեք կյանք:Կրթությունը չպետք է տա այնպիսի գիտելիքներ, որոնք հետագայում են նրան պետք գալու, այլ այնպիսիք,որոնք անհրաժեշտ են երեխային այսօր :Իմացության նման ճանապարհն ավելի է համապատասխանում երեխայի բնությանը, քան թե գիտելիքների համակարգի ավանդական հաղորդումը:

Նախագծային մեթոդը դասվում է փոխներգործուն մեթոդների շարքը: Այն նպաստում է սովորողի մեջ ճանաչողական, ինքնուրույն գործունեության,համագործակցային կարողությունների զարգացմանը,խթանում է նրա հետաքրքրությունը,ստեղծարարությունը, նպաստում է տեղեկատվական տարբեր աղբյուրներից օգտվելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, խնդիրներ ձևակերպելու և դրանց լուծում տալու կարողությունների զարգացմանը:Նախագիծը հնարավորություն է տալիս առարկայական ուսումնական նյութի յուրացումը դարձնել խորը և նպատակային, սովորողների կենսափորձից բխող, իրական կյանքին վերաբերող: Նախագծի շրջանակում սովորողներն իրենք են «կառուցում» իրենց գիտելիքը՝ միմյանց և ուրիշների հետ փոխհարաբերվելու, համագործակցելու միջոցով:

Նախագծային մեթոդը դիդակտիկական բովանդակությամբ նպատակաուղղված է այնպիսի ունակությունների ձևավորմանը, որոնց տիրապետելով դպրոցի շրջանավարտն ավելի հեշտ է կարողանում հարմարվել կյանքին, տեղի ունեցող փոփոխություններին, կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, իրականացնել տարբեր ընտրություններ:

Համաշխարհային փորձի վերլուծությունը վկայում է տարբեր երկրների կրթական համակարգերում այս մեթոդի լայն կիրառության մասին, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ տեղեկատվական հասարակության պայմաններում կարևորվում է ոչ թե այս կամ այն գիտելիքի, այլ դրանց ինքնուրույն ձեռքբերման և ճանաչողական ու գործնական խնդիրներում դրանց կիրառության ուսուցումը:Նախագծային մեթոդի հիմքում դրված է նախագիծ գաղափարը, որն ուղղորդված է այս կամ այն գործնական կամ տեսական նշանակության պրոբլեմի լուծման արդյունքին:Այդ լուծումը, մի կողմից, կանխատեսում է զանազան ուսուցման համախումբ,մյուս կողմից էլ՝ տարբեր առարկաների բնագավառներից ունեցած գիտելիքների, հմտությունների ինտեգրման անհրաժեշտություն: Ըստ Դյուիի՝ գրավիչն այնտեղ այն է,որ մեթոդը տեսական գիտելիքները զուգակցում է նրանց գործնական կիրառության հետ, ինչպես նաև՝ ապահովում սովորողների համատեղ գործունեությունը:Նախագծային գործունեության մեջ ներգրավված աշակերտը հասկանում է, թե ինչ խնդիր է լուծում, և դրա համար ինչ գիտելիքներ են իրեն անհրաժեշտ, աշխատանքի ընթացքում նա հասկանում է նաև՝ որտեղ և ինչպես պիտի կիրառի իր ձեռք բերած գիտելիքները: Նախագծային մեթոդն ուսուցման այնպիսի եղանակ է,որի դեպքում սովորողն անմիջականորեն ներառվում է ակտիվ իմացական գործընթացների մեջ, ինքնուրույնաբար ձևակերպում է իր խնդիրը, իրականացնում անհրաժեշտ տեղեկույթի հավաքագրում, պլանավորում խնդրի լուծման տարբերակներ, եզրակացություններ անում, վերլուծում սեփական գործունեությունը և արդյունքում ձեռք բերում նոր գիտելիքներ ու կենսափորձ:

Հետևաբար, նախագծի մեթոդը հիմնախնդրի մանրամասն մշակման և լուծման միջոցով ուսուցման նպատակներին հասնելու միջոց է, որը պետք է ավարտվի այս կամ այն կերպ ձևակերպված,շատ իրական,«շոշափելի» արդյունքով:Այն որոշակի հաջորդականությամբ իրականացվող հնարների, գործողությունների համախումբ է՝ միտված դրված նպատակի իրականացմանը: Եթե նախագծի հիմքում ընկած է տեսական հիմնախնդիր, ապա ենթադրվում է նրա՝ տեղեկատվական

արդյունքով ձևավորված կոնկրետ լուծումը, իսկ եթե գործնական՝ օգտագործման պատրաստ կոնկրետ արդյունքը:Մանկավարժության տեսանկյունից արդյունքը խորագիտակության ձևավորված մակարդակի փոփոխությունն է,որը սովորողը ցուցադրում է նախագծային գործունեության ընթացքում: Այսպիսով, ուսումնական նախագիծը մանկավարժի կողմից հատուկ կազմակերպված և աշակերտի կողմից՝ նրանց համար նշանակալից պրոբլեմի լուծմանն ուղղված, ինքնուրույն կատարվող գործողությունների համախումբ է, որն ավարտվում է ինչ-որ արդյունքի ստեղծմամբ:Նախագիծ ասելով հասկանում ենք կրթական իրավիճակների կազմակերպում, որի օգնությամբ սովորողը առաջադրում և լուծում է սեփական պրոբլեմները, ինչպես նաև ինքնուրույն գործունեությունն ուղեկցող տեխնոլոգիաները: Նախագծերը լավ հնարավորություն են տալիս վերահսկել սովորողների վարքն ու մտավոր գործունեությունը, բազմակողմանիորեն ճանաչել նրանց,քանի որ հաջողված ինքնուրույն ստեղծագործական որոնումը գիտելիքների խոր յուրացման և անձի ստեղծագործական զարգացման ցուցանիշ է:Այստեղ գիտելիքները դրսևորվում են ոչ ստանդարտ, նոր իրադրություններում, և սովորողներն օգտագործում են տարբեր կրթական բնագավառներից իրենց ձեռք բերած գիտելիքները:Նման գործունեության մեջ դրսևորվում է ուսումնական աշխատանքի հանդեպ սովորողների անձնային վերաբերմունքի մակարդակը, կոլեկտիվում աշխատելու կարողությունները, աշխատանքի որակի համար իր վրա պատասխանատվություն վերցնելու կամքը: Երեխաները դրսևորում են նախաձեռնություն և ինքնուրույնություն, նրանք սկսում են կայանալ որպես անձ՝ ընդունակ կյանքում ակտիվ գործունեության: Նախագծային մեթոդի հիմքում ընկած են սովորողների իմացական կարողությունների զարգացումը, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու և գործնականում օգտագործելու, տեղեկատվական տարածության մեջ կողմնորոշվելու և ստացած տեղեկույթը քննադատորեն իմաստավորելու կարողությունները:Մեթոդն ունի պրագմատիկ ուղղվածություն դեպի արդյունքը, որը պիտի ստացվի այս կամ այն տեսական կամ գործնական բնույթի պրոբլեմի լուծումից:

Նախագծի թեմաներն ընտրելիս պետք է հաշվի առնել, թե որքան կլինի սովորողների բեռնվածությունը, չի՞ հանգեցնի այն ընդհանուր ուսումնական գործընթացի խախտման: Պետք է նախապես գնահատել նաև առկա նյութական և տեղեկատվական ռեսուրսները: Թեմաները հնարավորինս պետք է համապատասխանեն ուսումնական գործընթացի պրոֆիլին:Նաև պետք է հաշվի առնել իրականացնողների ինտելեկտուալ, հոգեբանական և տեխնիկական հնարավորությունները: Այսինքն՝ ընտրվում է պրոբլեմային տիրույթը, դրվում է խնդիր, որոշվում են ստեղծվող արդյունքի վերջնական տեսքը, նրա ուսումնական նշանակությունը և պոտենցիալ օգտագործողները, ձևավորվում է նախագծողների կազմը, բաշխվում են պատականությունները՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի հնարավորությունները: Այնուհետև կատարվում է նախագծի բովանդակության ընտրություն, գնահատվում է մոտավոր ծավալը, մանրամասնվում, ճշգրտվում է յուրաքանչյուր մասնակցի դերը, իրականացման ժամկետը, որոշվում են նյութական անհրաժեշտ ծախսերը: Ուսումնահետազոտական գործունեությունը ենթադրում է սովորողի ստեղծագործական ընդունակությունների արթնացում և ակտիվացում: Ուսումնառությունը հետևողականորեն վերածելով

ակտիվ ստեղծագործական աշխատանքի՝ հանրակրթական դպրոցը դրանով իսկ պայմաններ կստեղծի ստեղծագործ անձի ձևավորման համար, ինչը բոլոր ժամանակներում (մեր ժամանակներում առավել ևս) հարմարվել ու հարմարվում է անձի ամենակարևոր որակը:

Ես, ապրելով ու աշխատելով Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքում, հեռավար կերպով ծանոթացել եմ Լոռու մարզի Քարինջ գյուղի դպրոցի չորրորդ դասարանցիների հետ:Նրանց հետ կազմակերպել ենք «Մեր առողջությունը» խորագրով համայնքային զարգացման նախագիծ,որը «Աշակերտական առաջնորդությամբ» ամառային ճամբարում 2021թ. ճանաչվել է հաղթող: Որպես մեծ գաղափար ընտրվել էր «Առողջ ապրելակերպ» արտահայտությունը, որի իրագործման համար սովորողները պետք է պատասխանեին «Ինչպե՞ս կոփել մարմինը» կարևոր հարցին:Հարցի պատասխանները նրանք երկար փնտրեցին՝ համագյուղացիների հետ հարցազրույցներ կազմակերպելով,համացանցային տեղեկություններ կարդալով,համապատասխան գրականություն ուսումնասիրելով , տեսանյութեր դիտելով և այլն :Արդյունքում եղած բազմաթիվ կարծիքներն ամփոփվեցին հետևյալ կերպ.

Առողջ լինելու համար Քարինջ գյուղի երեխաներին անհրաժեշտ է ունենալ բարեկարգ մարզահրապարակ:Նպատակին հասնելու համար սկսեցին գովազդել իրենց գաղափարը:Այդ նախագիծը մրցույթային էր:«Դասավանդի՛ր,Հայաստան»-ծրագրին հայտ ներկայացրած շուրջ 170 նախագծերից ընտրվեցին 5-ը,որոնցից մեկը մեր նախագիծն էր: Վերջինս ֆինանսավորվեց վերոնշյալ կազմակերպության կողմից և կյանքի կոչվեց :

Այսպիսով, աշակերտների աշխատասիրության, նպատակասլացության, պատասխանատվության շնորհիվ նրանց և ուսուցչի առողջ ու կառուցողական համագործակցության արդյունքում կարելի է հաղթահարել անհաղթահարելի թվացող խոչընդոտները:

Գլուխ 2

Նախագծի տեսակները, իրականացման փուլերը, դրական կողմերը և հնարավոր դժվարությունները

Նախագծերը կարելի է տեսակավորել ըստ մի քանի բնութագրիչների: Ներկայացնեմ դրանցից մի քանիսը, որոնք առավել նախընտրելի են իրականացնել տարրական դասարաններում:

Ըստ տեսակի	Ըստ բովանդակության	Ըստ ժամկետի	Ըստ մասնակիցների քանակի
Հետաքրքրական Ստեղծագործական Տեղեկատվական Գործնական Դերային,խաղային	Մոնոարկայական Միջարկայական Վերարկայական	Կարճատև Երկարատև	Անհատական Զույգերով կամ խմբային

ա)Ըստ տեսակի նախագծերը լինում են.

Հետազոտական նախագիծ

Այս նախագծի նպատակն է ձեռք բերել տեսական կամ գործնական նշանակության գիտական նորույթ պարունակող գիտելիքներ:Այս նախագծերը լիովին ենթարկվում են հետազոտության տրամաբանությանը և ունեն ճշգրիտ ու մանրամասն կառուցվածք, որը մոտավոր կամ ամբողջությամբ համընկնում է հիմնարար գիտական հետազոտությունների հետ: Այս տեսակի նախագծերը ներառում են ընտրված թեմայի արդիականությունը, խնդրի ձևակերպում, հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում. նպատակների ու խնդիրների սահմանում,վարկածի առաջադրում՝ դրան համապատասխան խնդիրը լուծելու համար, հետազոտության մեթոդների նկարագրությունը (տեսական և էմպիրիկ) , հետազոտության արդյունքների, եզրակացությունների քննարկում և ներկայացում, նոր հետազոտական խնդիրների ձևակերպում ,արտաքին գնահատում:

Ստեղծագործական նախագիծ

Նման տիպի նախագծերի նպատակը ստեղծագործական արտադրանքի ստեղծումն է, օրինակ՝ թերթ, շարադրություն, տեսահոլովակ, տոն, արշավախումբ և այլն: Ստեղծագործական նախագծերի առանձնահատկությունն այն է, որ դրանք չեն պահանջում սովորողների և ուսուցիչների համատեղ գործունեության մանրակրկիտ կառուցվածք, այն միայն ուրվագծվում է վերջնական արդյունքին համապատասխան: Այս նախագծերը պահանջում են վերջնական արդյունքի ձևի և կառուցվածքի խոհեմ ներկայացում:Դա կլինի տոնի սցենար, էսսեի կամ հոդվածի պլան, թերթի դիզայն, ռուբրիկներ և այլն:

Դերային ,խաղային նախագիծ

Այս նախագծերի յուրահատկությունը պլանավորված է նրանց անվանմամբ՝ նախագծի հեղինակները խաղում են գրական հերոսների, պատմական կամ գեղարվեստական կերպարների դեր, իսկ արդյունքը երևում է միայն նախագծի վերջում:

Ինչպե՞ս կավարտվի դատավարությունը:

Հակամարտությունը կլուծվի՞:

Ինչպես կավարտվեն բանակցությունները:

Կկնքվի՞ համաձայնագիր:

Տեղեկատվական նախագիծ

Այս նախագծի նպատակն է հավաքել տեղեկատվություն ցանկացած երևույթի մասին՝ այն ենթարկելով վերլուծության, ընդհանրացման և ԶԼՄ-ներում հրապարակելով՝ ներկայացնել լայն լսարանին: Համացանցը և նման այլ նախագծերը, այդ թվում նաև հետազոտական նախագծերը պահանջում են լավ մտածված կառուցվածք, որը պարունակում է նախագծի արդիականությունը և նպատակը, ուսումնասիրության և տեղեկատվության որոնման առարկա, տեղեկատվության աղբյուրների ցանկ (գրականություն, լրատվամիջոցներ, տվյալների շտեմարաններ, հետազոտության մեթոդների տվյալներ), տեղեկատվության մշակում (վերլուծություն, համեմատություն և հայտնի փաստեր, հիմնավորված եզրակացություններ), արդյունք (հոդված, ռեֆերատ, ռեպորտաժ,տեսահոլովակ կամ տեսաֆիլմ),ներկայացում հրապարակման տեսքով, քննարկում (համաժողովում,առցանց), արտաքին գնահատում:

Գործնական նախագիծ

Այս տիպի նախագծի նպատակն է մասնակիցների սոցիալական շահերից բխող արդյունքների ստացումը:Էկոլոգիայի, աշխարհագրության, պատմության և այլ ոլորտներում ձեռք բերված հետազոտությունների հիման վրա կարող են մշակվել հետևյալ փաստաթղթերը՝ բացահայտված խնդիրների հաղթահարմանն ուղղված գործողությունների ծրագիր, իրավունքի նախագիծ, տեղեկատու նյութ , ուղեցույցներ, եզրույթների բառարան, վիրտուալ թանգարանի նախագիծ, ձմեռային այգի և այլն: Գործնական նախագծերը պահանջում են գործողությունների քայլ առ քայլ մտածված կառուցվածք՝ արդյունքների մշակում, յուրաքանչյուր մասնակցի գործառույթների սահմանում, գործունեության համակարգում և ճշգրտում,ծրագրի արդյունքների իրականացման հնարավոր ուղիների գնահատում՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերը և այլն:

բ)Ըստ բովանդակության նախագծերը լինում են.

Մոնոառարկայական : Ընդգրկում է միայն մեկ առարկա: Նախագիծն իրականացվում է տվյալ առարկայի կոնկրետ թեմայի շրջանակներում:

Միջառարկայական: Ընդգրկում է մի քանի առարկաներ, որոնք առնչվում են տվյալ թեմային:

Վերառարկայական: Իրականացվում է ինտեգրված դասընթացների

ուսումնասիրման, ստեղծագործական աշխատանքի հիման վրա:

գ)Ըստ ժամկետի նախագծերը լինում են.

Կարճաժամկետ: Այս նախագծերի տևողությունը մեկից մինչև մի քանի դաս է: Նման նախագծի իրականացման միջին տևողությունը կարող է լինել մեկ շաբաթից մինչև մեկ ամիս:

Երկարաժամկետ: Այս նախագծի տևողությունը մեկ ամսից մի քանի ամիս է: Գործընթացի ավելի մեծ արդյունավետության համար անհրաժեշտ է նախագիծը բաժանել որոշակի տրամաբանական փուլերի, որոնց կատարումից հետո սովորողը պարտավոր է անվերապահորեն հաշվետու լինել:

դ) Ըստ մասնակիցների քանակի նախագծերը լինում են.

Անհատական: Նման նախագծերը արդյունավետ է օգտագործել որպես ստուգարքային կամ ամփոփիչ աշխատանք, քանի որ դրանք ներկայացնում են յուրաքանչյուր սովորողի գիտելիքներն ու հմտությունները:

Զույգերով կամ խմբային: Նախագիծն իրականացվում է զույգի կամ խմբի կողմից, մասնակիցներն ունենում են հստակ դերեր:

Նախագծի իրականացման փուլերը

Նախագծային աշխատանքի կազմակերպումը պահանջում է հստակ քայլաշար.

1. նախագծային թեմայի ընտրություն,
2. թեմայի տրոհում ենթաթեմաների,
3. հետազոտական աշխատանք իրականացնող խմբերի ձևավորում, 4. տեղեկատվության հավաքագրում,
5. տեղեկատվությունների քննարկում և մշակում,
6. թեմայի վերաբերյալ եզրահանգումների ձևակերպում,
7. հետազոտական հաշվետվության նախապատրաստում, 8. նախագծի պաշտպանություն,
9. արդյունքների ամփոփում:

Այսպիսով՝ նախագիծն ունի կառուցվածքային հինգ փուլ՝

1. խնդրի կամ հիմնահարցի առաջադրում, 2. նախագծում,
3. տեղեկատվության որոնում,
4. նախագծի ստեղծում,
5. նախագծի պաշտպանություն:

Նախագծային ուսուցում կազմակերպելիս հարկ է ապահովել նախագծի իրականացման փուլերի ճիշտ հերթագայությունը և նրանց հատկացվելիք ժամանակի իրատեսական համամասնությունը:

1-ին փուլ՝ խնդրի կամ հիմնահարցի առաջադրում, նպատակադրում: Մանկավարժը հանձնարարում է նախագծի թեման, սահմանում է հիմնահարցը, ձևակերպում նպատակներն ու խնդիրները: Սովորողները ընկալում են իրենց առջև դրված խնդիրը ու դրանից բխող նպատակները:

2-րդ փուլ՝ նախագծում *(*գործունեության տարբերակների քննարկում, իրականացման միջոցների և եղանակների ընտրություն, պարտականությունների բաշխում*):* Դասավանդողը կազմակերպում է նախագծի ստեղծման գործընթացը, սովորողներին բաժանում է խմբերի, բաշխում վերջիններիս դերերը խմբերում, սահմանում է նախագծային տեխնոլոգիայի կիրառման արդյունքը: Սովորողները ծրագրում են աշխատանքը, քննարկում գործունեության տարբերակները, ընտրում արդյունքների ներկայացման ձևերն ու եղանակները:

3-րդ փուլ՝ ինքնակրթություն, տեղեկատվության որոնում: Մանկավարժը նախագծի ստեղծման նշված փուլին չի մասնակցում: Նա ընդամենը խորհրդատվություն է տրամադրում սովորողներին՝ վերահսկելով խմբերի աշխատանքը, տալիս նոր գիտելիք: Սովորողներն աշխատում են ինքնուրույն, որոնում են նախագծի ստեղծման համար անհրաժեշտ նյութեր, խորհրդակցում են միմյանց հետ:

4-րդ փուլ՝ նախագծի ստեղծում, հետազոտական գործունեություն: Մանկավարժը դիտում է սովորողների ներկայացումները, անհրաժեշտության դեպքում խորհուրդներ է տալիս՝ նրանց նախապատրաստելով նախագծի պաշտպանությանը: Սովորողները կատարում են հետազոտություններ, համադրում, վերլուծում են տեղեկությունները, ստեղծում են նախագիծը, պատրաստվում պաշտպանությանը:

5-րդ փուլ՝ արդյունքների ընդհանրացում, հանրայնացում, շտկողական գործունեություն, նախագծի հրապարակային պաշտպանություն*:* Մանկավարժը, դիտելով սովորողների նախագծերը, հարցեր է ուղղում, անհրաժեշտության դեպքում ուղղորդում է, գնահատում նրանց կատարած աշխատանքը և խնդրի լուծման ինքնատիպությունը: Սովորողները ներկայացնում են ուսումնական նախագիծը, մասնակցում են խմբային վերլուծությանը, արդյունքների գնահատմանը, հարցեր են ուղղում միմյանց: Երբ սովորողները դեմ առ դեմ են կանգնում խնդիրներին՝ առանց պատրաստի լուծումների, նրանք բազմաթիվ հարցադրումներ են անում, և հնարավոր է, որ առավել ճշգրիտ լուծումների հանգեն իրենց քննադատական մտածողությամբ: Իրականացված նախագծի արդյունքների հրապարակային պաշտպանությունը բարձրացնում է սովորողի ինքնագնահատականը՝ նպաստելով նրա սոցիալականացմանը: Սովորողները իրականացնում են տեղեկատվության որոնում ու հավաքագրում՝ գրականության աղբյուրները, զանգվածային լրատվական միջոցները, համացանցն օգտագործելով: Դասավանդողը սովորողների ուշադրությունը բևեռում է տեղեկատվության հավաքման այնպիսի մեթոդների, ինչպիսիք են դիտարկումը, անկետավորումը, սոցիոլոգիական հարցումը, փորձի իրականացումը: Գրականությունից օգտվելու համար մանկավարժը սովորեցնում է սեղմագրման սկզբունքները: Սովորողները յուրացնում են տեղեկատվության հավաքման հմտությունը, զարգացնում են տեղեկատվությունը համեմատելու, դասակարգելու, վերլուծելու և համադրելու ընդունակությունը: Սովորողներից պահանջվում են խոր ըմբռնում ու իմաստավորում, փաստերի վերլուծություն ու եզրակացություն անելու հմտություն, ստացված տվյալների համակարգում: Ընդ որում՝ մշակվում են փորձերի, սոցիոլոգիական հարցումների և անկետավորման արդյունքները: Այս փուլում սովորողներին նախագծի ներկայացման ձևի ընտրության մեջ առավելագույն ինքնուրույնություն է ընձեռվում: Նախագծային գործունեության վերջնական արդյունքը ներկայացվում է զեկուցման, համակարգչային ներկայացման կամ ստենդային հոդվածի ձևով: Կատարվում է արդյունքների ամփոփում և ներկայացում տարբեր ձևերով՝ ըստ նախապես որոշված ձևաչափի: Դասավանդողը լսում է և նպատակային

հարցեր առաջարկում կամ ելույթ ունենում որպես սովորական մասնակից: Դասավանդողը գնահատում է սովորողների ջանքերը, նրանց ստեղծարարությունը, տեղեկությունների աղբյուրների օգտագործման որակը, աշխատանքի շարունակականության հնարավոր լինելը, նախագծի որակը:

Նախագծի դրական կողմերը

Նախագիծը համարվում է հաջողված,եթե .

1.Թեման ուղղված է կիրառական խնդիրների լուծմանը և թիրախավորում է կոնկրետ շահառուների:

2.Թեման արտացոլում է սովորողների անձնական խնդիրները կամ հետաքրքրությունները:
3.Թեմայի իրականացումը պահանջում է մի քանի առարկաներից ստացած գիտելիքների համադրում:

4.Սովորողները ներգրավված են հարցադրումներ կատարելու, ռեսուրսներ գտնելու, տեղեկատվությունը կիրառելու գործընթացներում:

5.Սովորողները որոշումներ են կայացնում նախագծի վերաբերյալ ,այն մասին,թե ինչպես են նրանք աշխատում, ինչ են ստեղծում:

6.Սովորողները և ուսուցիչները անդրադարձ են կատարում հարցադրումների և գործողությունների արդյունավետությանը, աշխատանքի որակին, խոչընդոտներին և դրանց հաղթահարման ռազմավարություններին:

7.Սովորողները կիրառում են հետադարձ կապ՝ բարելավելու գործընթացի արդյունավետությունը:

8.Սովորողներն իրենց աշխատանքը ներկայացնում են դասարանում և նրա սահմաններից դուրս:

Հնարավոր դժվարությունները

.Նախագծային թեմաների ընտրությունը և իրականացումը պահանջում է տարբեր առարկաների ուսուցիչների համատեղ աշխատանք,ինչը նրանց համար պահանջում է լրացուցիչ ծանրաբեռնվածություն:

.Աշխատանքը կատարվում է դասերից հետո,ինչը սահմանափակում է ուսուցիչների անմիջական շփումը սովորողների հետ:

.Աջակցության համար սովորողները երբեմն պետք է կապ հաստատեն տեղական բիզնեսի մասնագետների հետ,սակայն նրանցից ոչ բոլորն են երիտասարդներին լուրջ վերաբերվում և ցանկանում օժանդակել:

.Առկա թե նյութական և թե տեխնիկական ռեսուրսների պակասը,եթե խնդիրը պահանջում է որոշ նյութերի առկայություն կամ էքսկուրսիաների կազմակերպում:

.Պետք է օգնել սովողներին հաղթահարելու այս և նման այլ դժվարությունները,միշտ աշխատել ժամանակի և բյուջեի սահմանափակումների պայմաններում :Այդ հմտությունները նրանց պետք կգան ամբողջ կյանքի ընթացքում:

Գլուխ **3**

«Որևէ նպատակի հիրավի լուրջ ձգտելը

նրան հասնելու հաջողության կեսն է»

Վ. Հումբոլդտ

Իմ փորձառությունը

Աշխատանքի սկզբից մինչև վերջնարդյունքը մտքում պահել՝ նշանակում է գործը նախաձեռնել նպատակի հստակ պատկերացմամբ և իմանալ, թե դեպի ուր ես գնում:Այդ դեպքում առավել հստակ ես պատկերացնում՝ որտեղ ես այս պահին և քայլեր ես ձեռնարկում միայն ճիշտ ուղղությամբ:Երեխաներիս հետ չորս տարվա ուսումնառության արդյունքում ես հասկացա, որ ինձ հաջողվել է նրանց դարձնել հայրենահանաչ և հայրենասեր, մոտիվացնել դեպի շրջակա աշխարհի ուսումնասիրումն ու հետազոտումը:Աշակերտները վերահաստատեցին այն դրույթը, որ մեր համայնքներում կան անսահմանափակ հնարավորություններ, և իրենք ունեն ցանկություն՝ բացահայտելու այդ ներուժը:Այս ամենին հասնելու համար կազմակերպեցինք փոփոխությունների վրա հիմնված ուսումնառություն, որը ենթադրում էր տրամաբանական կապի մեջ մտնող հետևյալ գործողությունները՝ սահմանել մեծ գաղափար,ուսումնասիրել,նախագծել,գործել՝ քայլեր ձեռնարկելով և գնահատել:



Ծրագրի իրականացման պլանը.

«Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրի շրջանակում ես և իմ աշակերտները կազմակերպեցինք «Թաքնված գանձերի հետքերով» խորագրով համայնքային զարգացման նախագիծ,որն իրականացնելու համար կատարեցինք հետևյալ քայլերը.

1.Դիտելով համայնքի մասին պատմող տեսանյութը և հասկանալով,թե որն է տեսանյութի հիմնական գաղափարը՝ երեխաները տեղեկություններ փնտրեցին մեծ գաղափարի՝ հայրենահանաչության վերաբերյալ:
2.Համայնքում ուսումնասիրություններ կատարեցին և հասկացան,որ ունենք հայրենահանաչման խնդիր, և մեծ գաղափարի շուրջ ձևակերպեցին կարևոր հարց.«Ինչպե՞ս ճանաչելի դարձնել համայնքը»:
3.Կարևոր հարցին լուծում տալու համար համայնքում կատարեցին հետազոտություններ: Երեխաները տեղեկություններ հավաքեցին համացանցից և այլ պատմական աղբյուրներից Տեղեկություններ հավաքելու ճանապարհին հարցազրույց վերցրին իրենց ծնողներից, ուսուցիչներից, համայնքի տարեցներից և տարբեր մասնագիտություններ ունեցող անձանցից:Արդյունքում դրանք օգնեցին լուծում տալ ընտրած կարևոր հարցին:
4.Ներկայացնելով հավաքած տվյալների աղբյուրները (համայնքի բնակիչ, համացանց, ծնողներ, բժիշկ,գիրք՝«Երկիր ծննդավայր »-հեղինակ Իգնատ Մամյան)՝ երեխաները ստուգեցին դրանց հավաստիությունը և գնահատեցին համայնքի հնարավորությունները՝ վեր հանելով նրա ուժեղ և թույլ կողմերը:
5.Լուծում գտնելուց հետո (տպագրեցին օրացույց համայնքի վերաբերյալ) թիմով կազմեցին նախագծի առաջարկ, իսկ հետո ՝ ժամանակացույց, որտեղ նշվեց նրանց գործողությունների կատարման քայլերը և բյուջեն՝ այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են նախագիծն իրականացնելու համար:

Ժամանակացույց

Քայլ	Ժամկետ	Պատասխանատու	Աջակցող/ օգնական

1.Կազմել օրացույցի ստեղծման անհրաժեշտ միջոցների ցանկ: 2.Խոսել գաղափարի մասին տնօրենի հետ:	Փետրվարի 10-15 Փետրվարի 15-20	Հովհան նիսյան Մանե Աննա	Արտաշես, Գայանե ,Գոհար Մ.Մանե, Կարինե
3.Ներկայացնել գաղափարը	Փետր	Հ.Նարեկ	Գոհար, Էլյա,Ան. Արեգ

համայնքապետին: 4.Ներկայացնել գաղափարը համայնքի բնակիչներին:	վարի 25-30 Մարտի 1-10	Արտաքես	Նարե,Հ.Նարեկ
5.Հավաքագրել այն մարդկանց,ովքեր կարող են մեզ օգնել: 6,Կազմակերպել դրամահավաք համաֆինանսավորման	Մարտի 10-20 Մա	Գոհար Կարինե	Աննա,Հ.Մանե,Կարինե Էլյա,Մ.Մանե

նպատակով :	ը տ ի 2 0 - 3 0		

Բյուջե

Ապրանք	Նպատակ,նկա րագիր	Գ ի ն ը մ ի ա վ ո ր ի հ ա մ ա ր	Ք ա ն ա կ ը	Ը ն դ հ ա ն ո ւ ր գ ո ւ մ ա ր ը
1.Համայնքը բացահայտող	Ձևավորել օրացույցը:	**5** **0**	**3** **6** հ	**1** **8** **0**

լուսանկարներ (Լուսանկարչին տրվող գումար)		0 դ	ատ	00 դրամ
2.Օրացույցի նախնական մոդելավորում մասնագետի կողմից:	Օրացույցը բերել ընդհանուր տեսքի:	150000 դրամ	1 օրացույց	150000 դրամ
3.Տպարան	Տպել օրացույցը:	150000 դրամ	100 հատ	150000 դրամ
4.Ճանապարհածախս	Օրացույցի համար գնալ Վանաձոր '''Վանատուր տպարան '':	100000 դր	2 անգամ	200000 դր

		ա մ		ա մ
Այլ ծախսեր				**2 0 0 0 0 0** դ ր ա մ
Ընդամենը				**2 2 3 0 0 0** դ ր ա մ .

6.Ֆոնդհայթայթման աշխատանքների ժամանակ դիմեցին տարբեր կազմակերպությունների, Նոյեմբերյան համայնքի գործարարներին, ստացան ֆինանսավորում և ձեռնամուխ եղան նախագծի իրականացմանը:

7.Աշակերտները մասնակցեցին ծրագրի նախագծման աշխատանքներին՝ օրացույցի նկարազարդմանը, տեսարժան վայրերի մասին տեղեկությունների հավաքագրմանը, իսկ հետագայում փնտրեցին այն կառույցները,որոնց պետք է տրամադրվի օրացույցը:

8.Տպագրվեց 100 օրացույց, որոնցից մի մասը նվիրեցին համայնքի 50 կառույցների: Տպագրված մնացած օրացույցները ֆեյսբուքյան էջում տարածելով և գովազդելով՝ նրանք վաճառեցին:

Օրացույցների վաճառից ստացած հասույթը («Դասավանդի՛ր, Հայաստան»-ի, բարերարների լրացուցիչ օժանդակությամբ) օգտագործվեց պատճենահան սարք գնելու համար:Այդ սարքը ցայսօր օգտագործվում է երեխաների գրավոր աշխատանքների պատճենահանման համար:

Նախագիծը երեխաներին հնարավորություն տվեց գործնական խնդիրների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը» առարկաներից:

Երեխաները ծանոթացան մեր համայնքի մշակույթին, տեղեկություն ստացան համայնքի թաքնված գանձերի մասին: Ճանաչողության միջոցով երեխաների մեջ ձևավորվեց սեր հայրենիքի նկատմամբ: Նրանք արժևորեցին համայնքը, կարևորեցին սեփական քաղաքացիական պարտքը:

Աշակերտները ձեռք բերեցին ճանաչողական հմտություններ, սեփական գիտելիքներն ինքնուրույն արտահայտելու, վերլուծելու, կողմնորոշվելու, խմացածը գովազդելու, որոշումներ կայացնելու հմտություններ, զարգացավ նրանց քննադատական և ստեղծագործական մտածողությունը:

Նախաձեռնող խմբի աշակերտների մոտ աճեց նոր ծրագրեր իրականացնելու ցանկությունը և նրանց համայնքային ակտիվությունը դրական ազդեցություն ունեցավ առաջադիմության և նախաձեռնողականության վրա, խմբով և առանձին-առանձին նոր գաղափարների առաջնորդներ և իրականացնողներ դարձան:

Ծրագրի սահիկաշար

1.https://docs.google.com/presentation/d/1UC-qOYfbVmOCg_14oQtlimZuEhYwBzlZ/edit?usp=sharing&ouid=108270421824439618883&rtpof=true&sd=true

2. https://drive.google.com/drive/folders/1rXjFNgXS0xhrakE-0NtMn4B2M2spQHbt

3.https://drive.google.com/file/d/1vTE4DVod83yKT_o601mpk_2fYxCOOlc2/view?usp=sharing

4. https://drive.google.com/file/d/1Q8PeoNSKlgy1RCLLBsLB76L_U5uAVVAe/view?usp=sharing

5. https://drive.google.com/file/d/1mMNkMvlJ0Z4SV2AUWnKll8cw4Pi8zebt/view?usp=sharing

6. https://drive.google.com/file/d/1Q8PeoNSKlgy1RCLLBsLB76L_U5uAVVAe/view?usp=sharing

7.https://drive.google.com/file/d/1B7EpHz3exHbIpSg_ac8-oe9RuV7W35R9/view?usp=sharing

Եզրակացություն

«Կրթությունը պատմելը և պատմություններ լսելը
չէ. այն ակտիվ և կառուցողական գործընթաց է»:

Նախագծային աշխատանքի իրականացման հանապարհին ես եկա որոշ եզրահանգումների.

Սովորողների ինքնուրույն ստեղծագործական և արդյունավետ նախագծային գործունեության պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է.

1.Կատարել նախապատրաստական աշխատանքներ**.**

Աշխատանքը կազմակերպելիս հաշվի առնել կրտսեր դպրոցականի տարիքային հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները և նախագծի թեման ընտրել ուսումնական առարկաների բովանդակությունից կամ դրանց մոտ: Աշխատանքը սկսելիս «հող նախապատրաստել» նախագծի բովանդակային ոլորտում կապված նախնական գիտելիքների, հմտությունների և կարողությունների հետ:

2.Սովորողներին տալ նոր ձևավորված գիտելիքներ հենց նախագծի ընթացքում, բայց այն ժամանակ, երբ սովորողները դրանց կարիքը ունեն: Ի դեպ ինքնուրույն նախագծային գործունեության հատուկ հմտությունների և ունակությունների մշակումը կարելի է իրականացնել ոչ միայն նախագծի վրա աշխատելու ընթացքում, այլ նաև ավանդական պարապմունքների ժամանակ (Օրինակ՝ դասի թեմայի խնդրահարույց ներածություն, աշակերտների հետ դասի նպատակի սահմանում, գործնական առաջադրանքի իրականացման ինքնուրույն կամ կոլեկտիվ պլանավորում, դասի խմբային աշխատանքներ, այդ թվում՝ խմբի աշխատանքի դերային բաժանում, ռեֆլեքսիա, ինքնագնահատական և ինքնավերլուծություն):

3.Հաշվի առնել սովորողների հետաքրքրությունները,անհատական եւ տարիքային առանձնահատկությունները, մասնավորապես տարրական դպրոցում շոշափելով սովորողների

հետաքրքրությունները, անձամբ ձևակերպել և ներկայացնել խնդրահարույց հարցը կամ աջակցել աշակերտներին հարցը ձևակերպելու ժամանակ:

4.Ուշադրություն դարձնել խմբերի ձևավորման վրա**:** Տարրական դպրոցում նախագծային աշխատանքների իրականացման ժամանակ ձևավորել խմբեր ՝ բաղկացած 4- 5 սովորողից:

5.Հաշվի առնել եւ խուսափել «որոգայթներից»: Երբեմն աշակերտի դերը՝ որպես խմբի անդամ, նրա փոխարեն ստանձնում է ծնողը: Այդ պատճառով աշակերտների ինքնուրույնությունն ապահովելու համար կատարել աշխատանքի և առաջադրանքների ճիշտ բաշխում՝ հնարավորինս նվազեցնելով ծնողների միջամտությունը:

6.Կրտսեր տարիքի սովորողների հետ նախագծային աշխատանք իրականացնելիս դրա կատարման տևողությունը սահմանափակել մեկ ամսով՝ աշակերտների մոտիվացիան ամբողջ աշխատանքի կատարման ընթացքում պահպանելու նպատակով:

:

Սովորողների կողմից նախագծերի իրականացման համար անհրաժեշտ պայման է տեղեկատվական ռեսուրսի առկայությունը, որն ապահովում է սովորողի ինքնուրույնությունը նախագծի թեմայի ընտրության և դրա իրականացման հարցում:Պետք է պայմաններ ստեղծվեն նախագծի գործունեության արդյունքների ներկայացման համար (ապահովել համակարգչային տեխնոլոգիաների և այլ սարքավորումների հասանելիություն և այլն):Ուսուցման գործընթացում արդյունավետ սոցիալական և ինտելեկտուալ փոխազդեցությունների հիմքում ընկած են մի շարք կարողություններ՝

• Հարցնելու կարողություն (պարզել այլ սովորողների տեսակետները, ուսուցչին հարցում անել՝ պարզելու տեղեկատվությունը).

• Ձայնը կառավարելու կարողություն (հստակ խոսել՝ կարգավորելով ձայնի տոնայնությունը՝ կախված իրավիճակից, որպեսզի բոլորը կարողանան լսել):

• Սեփական տեսակետն արտահայտելու ունակություն (յուրաքանչյուրի համար պարզ ձևակերպել կարծիքը, հիմնավոր ապացուցել):

• Բանակցելու, ընկերական մթնոլորտում ամենաճիշտ, ռացիոնալ, օրիգինալ որոշումը, հիմնավորումը ընտրելու ունակություն:Որպես արդյունավետ նախագծային գործունեության համար կրտսեր սովորողների պատրաստակամության ցուցանիշ՝ մենք համարում ենք մանրամասն, բովանդակալից, տարբերակված ինքնագնահատման և գնահատման գործունեության փորձը, որը նպաստում է երեխաների հետևյալ անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը.

• Համարժեք գնահատել իրենց և դասընկերների աշխատանքը,

• Ողջամտորեն և բարեհաճորեն գնահատել կրթական խնդրի լուծման և՛ արդյունքը, և՛ ընթացքը՝ շեշտը դնելով դրականի վրա,

• Կարևորելով թերությունները՝ անել կառուցողական դիտողություններ:

Այսպիսով՝ նախագծային աշխատանքը նպաստում է սովորողների միջև հաղորդակցման մի շարք հմտությունների ձևավորմանը:Նախագծային մեթոդի օգտագործումը ենթադրում է ուսուցչի դերի արմատական փոփոխություն:Նա պետք է դառնա նախագծային գործունեության կազմակերպիչ (նախագծման հիմքում ընկած է սովորողներին նոր տեղեկատվության շնորհումը, սակայն այդ գործընթացն իրականացվում է անորոշության ոլորտում, և այն պետք է կազմակերպել), նախագծի առաջնորդ (նախագծի մանկավարժական ուղեկցում), խորհրդատու (ուսուցիչը առաջացնում է հարցեր, մտորումներ, գործունեության ինքնագնահատում, տարբեր իրավիճակների մոդելավորում, կրթական միջավայրի վերափոխում) և այլն:

Հ.գ.Փոխվեց համայնքի բնակիչների վերաբերմունքը երեխաների նկատմամբ: Նրանք արդեն համոզվել են, որ տարրական դասարանի աշակերտները կարող են առաջնորդել մի ամբողջ նախագիծ:Նախագծի վերջնարդյունք հանդիսացող,համայնքին վերաբերվող տպագրված օրացույցը դարձավ բնակիչների սեղանների «զարդը»:

Դպրոցի տնօրենի վերաբերմունքը նույնպես փոխվեց չորրորդ դասարանցիների նկատմամբ:Նա եկավ այն համոզման, որ որևէ նախագիծ իրականացնելու համար ուսուցիչը կարող է ընդամենը բացահայտել երեխաների ներուժը և հանդես գալ որպես ուղղորդող:

Նախագիծը բուռն արձագանք առաջացրեց նաև ծնողների շրջանում, և նրանք ոգևորված նախագծի արդյունքից ստացված հասույթով և բարերարների աջակցությամբ հանձն առան իրականացնել դասարանի գույքի համալրման գործընթացը:

Գրականություն

1.«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան,ուսումնամեթոդական հոդվածներ , 2016թ,«ՍԻՄ» տպագրատուն ՍՊԸ

2.Բալայան Ա.,Սարգսյան Գ.,Սադոյան Ա.,Սեյրանյան Ֆ. ,Ֆինանսական կրթության մեթոդական ձեռնարկ:Երևան,Միվապրեսս, 2019

3.Թութունջյան - <<Կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները>>: 1962թ.

4.Ստուպնիցկայա<<Ի՞նչ է ուսումնական նախագիծը>>

5.<<Նախաշավիղ>>գիտամեթոդական հանդես 2015թ.